ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀԱՄԱԼՐՎԵՑ ՆՈՐ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐՈՎ

27.11.2017 10:04

ՀՀ փաստաբանական դպրոցի 61 շրջանավարտ նոյեմբերի 25-ին ստացել է փաստաբանի գործունեության արտոնագիր:

Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը, ողջունելով ներկաներին, նշել է. «Փաստաբանական դպրոց ընդունվող յուրաքանչյուր ունկնդրի հետ Փաստաբանների պալատը մեծ հույսեր է կապում: Մեր ոլորտում նոր հայացքով և թարմ մոտեցումներով, ասելիք ունեցող փաստաբանը ոչ միայն համայնքի, ոլորտի ձեռքբերումն է, այլև կարևոր օղակ է արդարության բացահայտման և արդարադատության իրականացման համար:

Մեր հանրապետությունը բոլոր ոլորտներում ունի պրոֆեսիոնալ մասնագետների կարիք, մարդիկ, որոնք իրենց հայրենասիրությամբ, ջանասիրությամբ և մասնագիտական բարեխղճությամբ պատրաստ են դեպի լավը փոխել իրավիճակը: Ձեր համարձակությունից, ստեղծագործական մոտեցումից և կատարելագործման ձգտումից մարդկային ճակատագրեր են կախված լինելու:» Արա Զոհրաբյանը շնորհակալություն է հայտնել Փաստաբանական դպրոցի տնօրինությանը, և աշխատակազմին, Փաստաբանական դպրոցի խորհրդի անդամներին, Փաստաբանների պալատի աշխատակազմին, որոնց ջանքերով կազմակարպվել և անց են կացվել ուսումնառությունը և որակավորման քննությունները:

Պալատի նախագահը ապագա փաստաբաններին մաղթել է բարի երթ և հաջողություն:

Փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանը շնորհավորել է շրջանավարտներին՝ նշելով, որ ապագայում արդեն վերապատրաստման շրջանակներում որպես գործընկերներ են հանդիպելու: Նա մաղթել է բեղմնավոր աշխատանք բոլորին:

Խորհրդի անդամ, նախագահի տեղակալ Կարեն Մեժլումյանը խորհուրդ է տվել վստահորդի շահը վեր դասել սեփական շահից, նրանց հետ լինել ազնիվ: Նա հիշել է, որ ժամանակին իր փաստաբանական գործունեության մեկնարկին խորհուրդ է ստացել պահելու առաջին հոնորարը, դժգոհության դեպքում վստահորդին վերադարձնելու համար: Խորհրդի անդամ Սեդրակ Ասատրյանը շնորհավորել է նոր գործընկերներին՝ հորդորելով փաստաբանությանը մեծ նշանակություն տալ և իմիջիայլոց չմոտենալ ու դրան չնայել որպես երկրորդ գործի:

Խորհրդի անդամ Արա Ղազարյանը հատկանշական է համարել, որ նոր փաստաբաններին արտոնագիր է հանձնվում ՀՀ-ԵՄ՝ համապարփակ և ընդլայնված համագործակցության համաձայնագրի ստորագրման հաջորդ օրը: Նա նշել է, որ այս համաձայնագիրը նոր հորիզոններ է նախանշելու փաստաբանների համար:

Տարոն Սիմոնյանը կիսվել է իր համար սկզբունքային դարձած արժեքներով, նշելով, որ իմաստ չունի այն իրավունքը, որ մարդ ինքը չի նվաճում, անիմաստ է այն արդարությունը, որն ըստ էության իր ներսում չի բովանդակում իրավունքի արվեստը, ինքնանպատակ է այն ազատությունը, որը նպատակ չունի ընդարձակելու այլոց հորիզոնները: Նա նշել է, որ նոր փաստաբանները պետք է կերտեն այնպիսի անհատականություն, որ պատրաստ լինեն մարտի նետվելու հանուն արժեքակիր իրավունքի, իմաստակիր արդարության հորիզոն ընդարձակող ազնվության:

Նոր փաստաբանների անունից շնորհակալական խոսք է ասել Փաստաբանական դպրոցի շրջանավարտ Նարեկ Սամսոնյանը:

Արտոնագրերը հանձնելուց առաջ ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը նաև տեղեկացրել է, որ աշխատավայր, գրասենյակ չունեցող նոր փաստաբանների համար Պալատում կահավորված և տեխնիկապես զինված 20 տեղանոց աշխատասենյակ է հատկացվելու 6 ամսով, ինչը կօգնի փաստաբաններին ունենալ աշխատատեղ, կայանալ իրենց մասնագիտության մեջ, փորձ և վստահորդներ ձեռք բերել: Նա նշել է, որ նոր փաստաբանների կայացմանն աջակցելու այս ծրագրով պայման է դրվելու նաև, որ նրանք սպասարկեն անվճարունակ քաղաքացիներին:

Erebuni Plaza
Business center
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ԵՐԵՎԱՆ
EREBUNI
PLAZA
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



EREBUNI
PLAZA
ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })